Սամվել Ա. Պողոսյան
Պատմ. գիտ. թեկնածու

ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՐՑԸ ՍԵՎՐԻ ԵՎ ԼՈԶԱՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ

Հայ պատմագրության մեջ Սևրի պայմանագիրը լուսաբանվել է հիմնականում Արևմտյան Հայաստանին վերաբերող հոդվածների մասով, իսկ Կիլիկիայի կարգավիճակի հարցը գրեթե ամբողջությամբ մատնվել է անուշադրության: Ընդունված տեսակետ է, որ այդ պայմանագրով Կիլիկիան ամբողջությամբ զիջվել է Թուրքիային, ինչը չի համապատասխանում իրականությանը:

Մեր ուսումնասիրության նպատակն է լուսաբանել և հանրությանը ներկայացնել Առաջին աշխարհամարտից հետո Կիլիկիայի վերաբերյալ հայկական ծրագրերը, Սևրի պայմանագրով այդ երկրամասի կարգավիճակը, նրա բաժանումը Թուրքիայի ու Սիրիայի միջև, Կիլիկիայի նոր սահմանները, ինչպես նաև հետագա միջազգային քննարկումների արդյունքում այնտեղ հայկական ազգային օջախ ստեղծելու խնդիրը՝ մինչև Լոզանի կոնֆերանս:

Կիլիկիան նախապատերազմյան շրջանում ընդգրկված էր Ադանայի վիլայեթի և Հալեպի վիլայեթի Մարաշի սանջակի մեջ: Այնտեղ բնակվում էին 407.000 հայեր՝ ընդդեմ 294.762 մահմեդականների, որոնցից միայն 131.000-ն էր թուրք[1]: Կիլիկիայի հայերը նույնպես անցան Մեծ եղեռնի սարսափների միջով, ուստի համաշխարհային պատերազմի ժամանակ այն ամբողջությամբ հայաթափվեց: Պատերազմից հետո Կիլիկիա վերադարձան և իրենց ավերված օջախները վերականգնելով՝ փորձեցին նոր կյանք սկսել 150.000 հայեր:

Առաջին համաշխարհային պատերազմի հենց սկզբից Կիլիկիայի նկատմամբ իր նկրտումները հայտնեց Ֆրանսիան: 1916 թ. մայիսի 16-ին Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի միջև ստորագրված Սայքս-Պիկոյի գաղտնի համաձայնագրով պատերազմից հետո Ֆրանսիային էին անցնելու ոչ միայն Կիլիկիան, այլ նաև Խարբերդի, Դիարբեքիրի և Սեբաստիայի նահանգները: Կիլիկիայում հաստատվելու և տեղի հայերի վրա իրենց ազդեցությունը տարածելու նպատակով 1916 թ. աշնանը ֆրանսիացիները համաձայնեցին իրենց վրա վերցնել և փոխհատուցել 1915 թ. սեպտեմբերից Պորտ Սայիդի գաղթականական ճամբարում պահվող մուսալեռցիների բոլոր ծախսերը, որոնք մինչ այդ պահվում

*Հոդվածն ընդունվել է տպագրության 25.07.2012:

1 Տե՛ս **Nubar Boghos**, The Pre-war Population of Cilicia, London, 1920, p. 3.

էին Եգիպտոսի բրիտանական իշխանությունների կողմից[2]:

Արևելքում ֆրանսիացիները բավարար ուժեր չունեին, որպեսզի անհրաժեշտ պահին կարողանային գրավել Սիրիան ու Կիլիկիան: Դա էր պատճառը, որ նրանք 1916 թ. աշնանը որոշեցին այդ երկրամասերին ամենամոտը գտնվող վայրում՝ Կիպրոսում, կազմավորել «Հայկական լեգեոնը», որի մեջ հիմնականում ընդգրկվեցին մուսալեռցիները, բրիտանացիների կողմից գերված թուրքական բանակի հայ զինվորները, մեծ թվով ամերիկահայ ու եգիպտահայ կամավորներ: «Հայկական լեգեոնը», ըստ ֆրանսիացիների տված խոստումների, իր թափած արյան դիմաց ապահովելու էր Կիլիկիայի ինքնավարությունը Ֆրանսիայի հովանու տակ և դառնալու էր այդ ազատագրված երկրամասի բանակի ու ոստիկանության միջուկը[3]: Նա մասնակցություն ունեցավ 1918 թ. սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած Արարայի ճակատամարտում, Պաղեստինի, Լիբանանի, Սիրիայի և Կիլիկիայի ազատագրման համար մղված մարտերում: «Հայկական լեգեոնի» պաշտպանության ներքո մոտ 150.000 տարագիր կիլիկիահայեր վերադարձան իրենց ավերված օջախները:

1918 թ. հոկտեմբերի 8-ին, երբ արդեն պարզ էր պատերազմում Թուրքիայի պարտությունը, և օրակարգում էր նրա անձնատվության հարցը, Հայ ազգային պատվիրակության նախագահ Պողոս Նուբար փաշան դիմեց Անտանտի երկրներին, որպեսզի զինադադարի պայմանների մեջ մտցվեն հետևյալ հոդվածները. 1. տեղահանված և գաղթական հայերի վերադարձ՝ դաշնակից զորքերի պաշտպանության տակ և հայկական վեց նահանգների ու Կիլիկիայի բոլոր ռազմական կետերի գրավում, 2. արգելել Օսմանյան կառավարությանը կազմակերպելու թուրքերի ներգաղթն այդ նահանգներ, 3. դաշնակից բանակների կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել սովահար հայ բնակչության գոյությունը ապահովելու և երկիրը վարչականորեն կազմակերպելու համար[4]:

1918 թ. հոկտեմբերի 30-ին Մուդրոսում ստորագրվեց զինադադարի համաձայնագիրը Անտանտի երկրների և պարտված Թուրքիայի միջև, որի մի քանի հոդվածներ անմիջականորեն առնչվում էին Կիլիկիային և Արևմտյան Հայաստանի վեց վիլայեթներին.

Հոդված 10. Տավրոսի թունելների համակարգի ռազմական օկուպացիան դաշնակիցների կողմից:

Հոդված 16… Թուրքական զորքերի դուրսբերումը Կիլիկիայից:

Հոդված 24. Հայկական վիլայեթներից որևէ մեկում անկարգություններ ծագելու դեպքում դաշնակիցներն իրենց վերապահում են նրա մի մասը գրավելու իրավունքը[5]:

Ինչպես տեսնում ենք, ոչ միայն Պողոս Նուբարի պահանջները չէին ընդգրկված զինադադարի պայմանների մեջ, այլև հայկական վեց վիլայեթների հսկողությունը թողնված էր թուրքերին: Զինադադարի պայմաններով թուրքական բանակի միայն մի մասն էր զորացրվելու: Այս «բացթողումները» հետագայում

2 Տե՛ս **Պեյլերյան Ա.**, Մեծ տերությունները, Օսմանյան կայսրությունը և հայերը ֆրանսիական արխիվներում (1914-1918), հատոր I, Եր., 2005, էջ 337-338:

3 Տե՛ս Boghos Nubar`s Papers and the Armenian Question 1915-1918. Documents. Edited and translated by V.Ghazarian. Waltham, 1996, pp. 368-370.

4 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 26, թ. 15:

5 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), Զ. Կիրակոսյանի խմբագրությամբ, Եր., 1972, էջ 537-539:

հնարավորություն տվեցին Էրզրումի և Սեբաստիայի հայկական նահանգների տարածքում սկսել քեմալական շարժումը:

1919 թ. սկզբներին հաշտության վեհաժողովին մասնակցելու համար Փարիզ ժամանեց Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը, որի նախագահն էր Ավետիս Ահարոնյանը, իսկ անդամները՝ Համազասպ Օհանջանյանը և Միքայել Պապաջանյանը: 1918 թ. դեկտեմբերի 7-ին կառավարության կողմից հաստատված հրահանգներով ՀՀ պատվիրակությունը Փարիզի վեհաժողովից պահանջելու էր ստեղծել Միացյալ Հայաստան՝ Անդրկովկասի հայկական տարածքների ու վեց վիլայեթների միավորմամբ՝ ելքով Սև ծով: Եթե չհաջողվեր ապահովել այդ սահմանները, ապա Հայաստանը նվազագույնը ներառելու էր Վանը, Բիթլիսը, Էրզրումը, իսկ Անդրկովկասում դուրս էին թողնվելու միայն Գանձակի ու Թիֆլիսի նահանգների որոշ շրջաններ, սակայն ծովային ելքը պարտադիր էր: Մանդատը գերադասելի էր համարվում հանձնել այնպիսի տերության, որը շատ չէր միջամտի երկրի ներքին գործերին[6]: Պետք է նշել, որ այդ շրջանում նման պետություն էր համարվում ԱՄՆ-ը:

Փաստորեն Փարիզում գործելու էին հայկական երկու պատվիրակություններ՝ Հայաստանի Հանրապետությանը և Հայ ազգայինը, որը ներկայացնում էր արևմտահայության շահերը: Ուստի Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը կազմեցին հայկական պահանջների միասնական ծրագիր: Մանդատի հարցում երկու պատվիրակություններն էլ գերադասում էին ԱՄՆ-ին: Չնայած ՀՀ պատվիրակությանը հանձնված հրահանգներում, ինչպես վերը տեսանք, խոսք չկար Կիլիկիայի մասին, սակայն Ա. Ահարոնյանը համաձայնեց այն մտցնել հայկական պահանջների մեջ: Նա ՀՀ ԱԳ նախարարին հետևյալ կերպ պատճառաբանեց այդ քայլը. 1. Բոլոր թուրքահայերն ու Պողոս Նուբարը առանց Կիլիկիայի Հայաստան ըմբռնել չեն ուզում, և եթե ինքը չհամաձայներ, ապա պառակտումն անխուսափելի կլիներ, 2. Ամերիկան միայն Կիլիկիայի միջոցով կարող էր օգնել Հայաստանին, քանի որ Սև ծովի ափին հարմար նավահանգիստ չկար, 3. եթե Կիլիկիան մնար Ֆրանսիային, ապա վերջինս այն կկցեր Սիրիային և բավական ստվար հայություն կկտրվեր հայրենիքից, 4. հայության փրկված հատվածի մեծ մասը կիլիկիացի կամ սուետիացի է, և ոչ մի պայմանով նրանք չեն գնա խոպան ու ավեր Հայկական լեռնաստանը: Պոլսի, Զմյուռնիայի և Եգիպտոսի հայերը նույնպես միայն Կիլիկիա կգնան, 5. պետությունները միայն Կիլիկիայում ֆինանսական ներդրումներ կկատարեն, քանի որ Հայաստանում ուշադրության արժանի ոչինչ չկա[7]:

Սակայն, պահանջելով Կիլիկիան, հայ պատվիրակները հանդիպեցին Ֆրանսիայի դիմադրությանը, որը ձգտում էր այն վերցնել իր հովանու տակ, և Հայկական հարցը հետագայում շատ տուժեց Ֆրանսիայի խարդավանքների հետևանքով: Անշուշտ, 1919 թ. սկզբին որոշ ֆրանսիացի գործիչներ ցանկանում էին Հայաստանի վրա տարածել Ֆրանսիայի մանդատը: Դեռևս հունվարի 9-ին հանդիպելով բրիտանական պատվիրակության անդամ Լուի Մալլեթին՝ Պողոս Նուբարը տեղեկացրեց, որ ֆրանսիացիները մեծ ճնշում են գործադրում, որպեսզի ինքը նախընտրի Ֆրանսիայի մանդատը՝ հակառակ դեպքում սպառնալով Հայաստանին միայնակ թողնել իր ճակատագիրը լուծելիս: Պողոս Նուբարը

6 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց.1, գ. 193, թ. 10-12:
7 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 200, ց. 1, գ. 193, թ. 154-155: Տե՛ս նաև՝ նույն տեղում, ց. 2, գ. 47, թ. 2-3:

հայտնեց, որ կգերադասեր ԱՄՆ-ի մանդատը, իսկ անհաջողության դեպքում, եթե խորհրդաժողովը որոշի, կընդունի Ֆրանսիայի օգնությունը[8]:

1919 թ. փետրվարի 15-ին Ա. Ահարոնյանը տեսակցեց «Le Temps»-ի խմբագիր Ադրիեն Հեբրարի հետ: Վերջինս նշեց, որ Ֆրանսիան երբեք չի հրաժարվի Կիլիկիայից, իսկ հայկական պահանջները որակեց «իմպերալիստական հովեր»[9]: Մարտի 1-ին Պողոս Նուբարը հանդիպեց «Le Matin»-ի խմբագրի հետ, որը նույնպես դժգոհություն հայտնեց հայերի կողմից Կիլիկիան և հատկապես Ալեքսանդրետի նավահանգիստը պահանջելու առիթով[10]: Նույնիսկ ԱՄՆ նախագահ Վուդրո Վիլսոնը փետրվարի 12-ին Եղիշե արքեպիսկոպոս Դուրյանի և պրոֆեսոր Աբրահամ Տեր-Հակոբյանի հետ հանդիպման ընթացքում զգուշացրեց, որ Կիլիկիայի պատճառով հայերը դժվարությունների կհանդիպեն որոշ տերությունների կողմից[11]:

1919 թ. փետրվարի 26-ին Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը հրավիրվեցին Տասի խորհրդի նիստին՝ ներկայացնելու հայկական պահանջները: Պետք է նշել, որ ֆրանսիացի որոշ բարձրաստիճան գործիչներ, հատկապես Ֆրանսիայի ԱԳՆ Արևելքի բաժնի պետ Ժան Գուն, փորձեցին խոչընդոտել կոնֆերանսին Պողոս Նուբարի մասնակցությանը[12]: Նրանք դրանով ցանկանում էին հայերին հեռու պահել Կիլիկիան պահանջելու մտքից, որի հիմնական պաշտպանը Ազգային պատվիրակության ղեկավարն էր: Սակայն Պողոս Նուբարը բրիտանացիների միջամտությունից հետո ստացավ պաշտոնական հրավեր:

Նիստը նախագահում էր Ֆրանսիայի ԱԳ նախարար Ստեֆան Պիշոնը, ներկա էին Ռոբերտ Լանսինգը և Հենրի Ուայթը (ԱՄՆ), Արթուր Բալֆուրը և լորդ Չարլզ Հարդինգը (Բրիտանիա), Սիդնեյ Սոննինոն (Իտալիա), Մացուի Կեյշիրոն (Ճապոնիա), ինչպես նաև այլ պաշտոնյաներ ու բազմաթիվ խորհրդականներ: Հայ պատվիրակները Տասի խորհրդի անդամներին բաժանեցին Հայկական հարցի վերաբերյալ հայկական հուշագիրը[13]: Նրանում ներկայացված էին Հայկական հարցի համառոտ պատմությունը, հայկական կոտորածները պատերազմի ընթացքում, հայերի պայքարը դաշնակիցների կողքին, և պահանջվում էր հայերին ճանաչել կռվող կողմ:

Ըստ հուշագրի հայկական պետությունն ընդգրկելու էր հետևյալ տարածքները. 1. Վան, Բիթլիս, Դիարբեքիր, Խարբերդ, Էրզրում, Սեբաստիա և Տրապիզոն՝ առանց Տիգրիսից հարավ և Օրդու - Սեբաստիա գծից արևմուտք ընկած շրջանների: 2. Կիլիկիայի չորս սանջակները՝ Մարաշը, Խոզանը (Սիս), Ջեբել-Բերեքեթը և Ադանան՝ Ալեքսանդրետով: 3. Կովկասի Հայկական Հանրապետության տարածքը. Երևանի նահանգը, Թիֆլիսի նահանգի հարավային մասը, Գանձակի նահանգի հարավարևմտյան մասը, Կարսի նահանգը՝ առանց Արդահանից հյուսիս ընկած շրջանի:

Նշվում էր, որ չպետք է հաշվի առնել ցեղասպանության հետևանքով հայերի թվի նվազումը Հայաստանում: «Անթոյլատրելի է, որ ոճիրներից օգուտ քաղեն նրանց հեղինակները և նրանք հասնեն իրենց հրէշաւոր ծրագրի նպատակին -

8 Տե՛ս **Գալոյան Գ.**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 205:
9 **Ահարոնյան Ա.**, Սարդարապատից մինչև Սևր և Լոզան, Եր., 2001, էջ 11-12:
10 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց.1, գ. 18, թ. 28:
11 Տե՛ս նույն տեղում, թ. 39:
12 Տե՛ս **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 14-15:
13 Տե՛ս Հայկական Հարցը Հաշտութեան կօնֆերանսի առաջ, Թիֆլիս, 1919:

ապահովել մահմեդականների մեծամասնութիւնն ու գերակայութիւնը»[14]: Մատնանշվում էր, որ բացի բարոյականից կա նաև գործնական կողմ. «Հայերը միակ տարրն են, որ ի վիճակի է այժմ քաղաքակրթութեան և պրոգրեսի ընդունակ մի պետութիւն կազմելու»[15]:

Հայկական պետության մեջ խոստանում էին ազատություններ տալ ազգային փոքրամասնություններին: Անհրաժեշտ էր համարվում որևէ պետության աջակցությունը երկրի կազմակերպման, տնտեսական ու ֆինանսական վերականգնման գործում: Այդ օժանդակությունը չպետք է ստանար պրոտեկտորատի կերպարանք, և մանդատը տրվելու էր առավելագույնը 20 տարով: Նաև պահանջվում էր վնասների հատուցում Թուրքիայից:

Հուշագիրը ներկաներին բաժանելուց հետո Ա. Ահարոնյանը խոսեց Հայաստանի Հանրապետության իրավունքների մասին, ապա Պողոս Նուբարը ներկայացրեց արևմտահայության պահանջները՝ գլխավոր շեշտը դնելով Կիլիկիայի խնդրի վրա[16]:

1919 թ. մարտի 5-ին Մեծ Բրիտանիայի, Իտալիայի, Ֆրանսիայի վարչապետներ Լլոյդ Ջորջը, Վիտորիո Օռլանդոն, Ժորժ Կլեմանսոն և ԱՄՆ ներկայացուցիչ գնդապետ Էդուարդ Հաուզը առանձնազրույց ունեցան, ուր Ժ. Կլեմանսոն պահանջեց Կիլիկիան հանձնել Ֆրանսիային, բայց Լ. Ջորջը և Է. Հաուզը նշեցին, որ դա Հայաստանի ամենահարուստ մասն է, և ԱՄՆ-ը մանդատը վերցնելու է հենց այդ երկրամասի համար: Մարտ-ապրիլ ամիսներին անգլո-ամերիկյան կողմը ֆրանսիացիների հետ բանավիճում էր Կիլիկիայի պատկանելության շուրջը: Չնայած 1919 թ. ապրիլի 14-ին Ֆրանսիայի վարչապետ Ժ. Կլեմանսոն համաձայնեց այդ երկրամասը զիջել Հայաստանին, եթե վերջինիս մանդատը վերցնի ԱՄՆ-ը, սակայն դրանից հետո էլ Կիլիկիայի հարցում Ֆրանսիան խոչընդոտներ էր հարուցում[17]: Հատկապես մեծ ջանքեր գործադրեց Լ. Ջորջը, որպեսզի համոզի Ժ. Կլեմանսոյին՝ Կիլիկիայի մի մասը զիջել Հայաստանին, որպեսզի ԱՄՆ-ը կարողանա վերցնել մանդատը[18]: Այս առիթով սփյուռքահայ պատմաբան Լևոն Չորմիսյանը հետագայում նկատում էր, որ հայ գործիչները ԱՄՆ-ի հետևից ընկան՝ մոռանալով մինչ այդ Կիլիկիայի համար Ֆրանսիային կատարած դիմումների մասին և հաշվի չառնելով, որ «երկրին եւ շրջանին տիրող ուժը փաստօրէն կը մնար միշտ ֆրանսական ուժը»[19]:

Սակայն պետք է նշել, որ տվյալ ժամանակաշրջանում հայ պատվիրակներն այլ ելք չունեին. ֆրանսիացի գործիչների մեծ մասը դեմ էր ամբողջ Հայաստանի մանդատին և ցանկանում էր Ֆրանսիայի հովանու տակ վերցնել միայն Կիլիկիան, իսկ անգլո-ամերիկյան կողմը ձգտում էր Հայաստանի մանդատը հանձնել ԱՄՆ-ին, որն իր հերթին պարտադիր պայման էր համարում Կիլիկիայի միացումը: Հետևաբար, հայ գործիչները պահանջեցին ամերիկյան մանդատ՝ միացյալ Հայաստան ստեղծելու հույսով:

Պողոս Նուբարը 1919 թ. մարտին դիմումներ կատարեց դաշնակիցներին՝ Կիլիկիայում տեղի ունեցող կոտորածները կանխելու համար և առաջարկեց դաշնա-

---

14 Հայկական Հարցը Հաշտութեան կօնֆերանսի առաջ, էջ 7:
15 Նույն տեղում:
16 Տե՛ս **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 14-16:
17 Տե՛ս **Hovannisian R.**, The Republic of Armenia, vol. 1, Los Angeles, 1971, p. 322.
18 Տե՛ս **Ллойд Джордж,** Правда о мирных договорах, т. 1, Москва, 1957, с. 252-253.
19 **Չորմիսեան Լ.**, Կուսակցութիւնները, Եր., 1995, էջ 91:

կիցների կամ հայկական զորքերի միջոցով գրավել Հայաստանը և Կիլիկիան, պաշտոններից հեռացնել թուրքերին, քանի որ նույնիսկ զինադադարից չորս ամիս անց դեռ հայկական ջարդեր էին տեղի ունենում[20]: Ցավոք, զինադադարից հետո Կիլիկիայում հաստատված բրիտանական, ապա ֆրանսիական իշխանությունները պաշտոններից չհեռացրին թուրքերին, բավարար աշխատանքներ չտարան մահմեդական բնակչությանը զինաթափելու համար, որոնց մեծ քանակությամբ զենք ու զինամթերք էր թողել նահանջող թուրքական բանակը: Դրանք հանգեցրին հայկական նոր ջարդերի, ֆրանսիական իշխանությունների դեմ ապստամբությունների և, ի վերջո, մեծ ողբերգության:

Պողոս Նուբարը, Ա. Ահարոնյանը և երկու պատվիրակությունների անդամները 1919 թ. մայիսի 19-ին Փարիզում հանդիպեցին նաև ռուսական հակախորհրդային ուժերը ներկայացնող «Քաղաքական խորհրդակցության» անդամներ Մաքսիմ Գիրսի, Անդրեյ Մանդելշտամի, իսկ մայիսի 22-ին՝ Վասիլի Մակլակովի և Բորիս Բախմեդևի հետ: Նրանք ցանկանում էին պարզել ռուս քաղաքական գործիչների տեսակետները Հայկական հարցի վերաբերյալ: Վերջիններս դրականորեն արտահայտվեցին Միացյալ Հայաստանի ստեղծման գաղափարին, որին անհրաժեշտ էին համարում միացնել Կիլիկիան, որպեսզի Ռուսաստանը Հայաստանով ելք ունենա դեպի Միջերկրական: Նրանք ԱՄՆ-ի մանդատը համարեցին լավագույնը, քանի որ այդ պետությունը, ըստ իրենց, Արևելքում նվաճողական ծրագրեր չուներ և վաղ թե ուշ հեռանալու էր տարածաշրջանից: Ռուս գործիչները հրաժարվեցին պաշտոնապես հայտարարել, որ կողմ են Հայաստանի անջատմանը Ռուսաստանից, քանի որ դա առիթ կտար նույնը պահանջել Ռուսաստանի տարածքում առաջացած մյուս պետություններին, սակայն հայերին արտոնեցին բանակցությունների ընթացքում նշել իրենց դրական վերաբերմունքը Հայաստանի անջատման հարցում[21]:

Սակայն 1919 թ. կեսերից պարզ դարձավ, որ ԱՄՆ-ի կողմից Հայաստանի հովանավորությունը վերցնելու հավանականությունը հետզհետե փոքրանում է, իսկ դաշնակիցների թողտվության պայմաններում Էրզրումի ու Սեբաստիայի նահանգների տարածքում սկսվել է քեմալական շարժումը, որը հետագայում լուրջ խոչընդոտ դարձավ Միացյալ Հայաստան կերտելու ճանապարհին: Նման պայմաններում հայ գործիչները լավագույն լուծում էին համարում հնարավորինս ընդարձակ արևմտահայկական տարածքների միացումը Հայաստանի Հանրապետությանը, իսկ Կիլիկիայի համար՝ ինքնավարությունը Ֆրանսիայի հովանու տակ:

1919 թ. դեկտեմբերի 8-ին Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը հանդիպեցին Վեհաժողովի ամերիկյան պատվիրակության անդամ Հ. Ուայթին: Վերջինս ԱՄՆ-ի կողմից մանդատից հրաժարվելը վերջնական չհամարեց, սակայն մատնանշեց այն վերցնելու փոքր հավանականությունը: Նա նշեց, որ հավանաբար տերությունները Հայկական հարցը կլուծեն առանց ԱՄՆ-ի կարծիքը հաշվի առնելու, որում շահագրգռված է հատկապես Ֆրանսիան՝ Կիլիկիան պահելու մտահոգությամբ, քանի որ Հայաստանի մանդատի հետ ԱՄՆ-ը պահանջում է նաև այդ երկրամասը[22]:

20 Տե՛ս «Վերածնունդ», Փարիզ, 1919, N 6-7:
21 Տե՛ս **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 27-28:
22 Տե՛ս նույն տեղում, էջ 43-44:

1920 թ. հունվարի 25-ին Պողոս Նուբարը և Ա. Ահարոնյանը հանդիպեցին Ֆրանսիայի ԱԳՆ քաղաքական տնօրեն Ֆիլիպ Բերտլոյին: Նրանք հարցրին Կիլիկիայի ճակատագրի մասին, առաջարկեցին այն կառավարել՝ հենվելով հայ տարրի վրա, իսկ Հայաստանի սահմանները հասցնել մինչև ֆրանսիական տիրապետության գոտին և Հայաստանի համար Կիլիկիայով տնտեսական ելք ապահովել դեպի Միջերկրական: Ֆ. Բերտլոն վստահեցրեց, որ Ֆրանսիան կմնա Կիլիկիայում և սահմանակից կլինի Հայաստանին, հնարավոր համարեց տնտեսական ելք տալ դեպի Միջերկրական ծով և խոստացավ, որ Միացյալ Հայաստանի կազմում կլինի նաև Էրզրումը[23]: Սակայն 1920 թ. փետրվարի 20-ին Լոնդոնում Ֆ. Բերտլոն Պողոս Նուբարի ու Ա. Ահարոնյանի հետ հանդիպման ընթացքում խուսափեց որևէ ձևով հաստատել նախորդ հանդիպման իր խոստումները[24]: Բնական է, որ Ֆրանսիան ոգևորված չէր Հայաստանի սահմանները մինչև Կիլիկիա հասցնելու գաղափարով, քանի որ հետագայում հայկական պետությունը ձգտելու էր ազատագրել հայաբնակ այդ երկրամասը, որի հետևանքով Ֆրանսիան լուրջ խնդիրներ կունենար:

1920 թ. փետրվարի 18-ին Պողոս Նուբարը Լոնդոնի ամերիկյան դեսպանատան միջոցով դիմեց նախագահ Վ. Վիլսոնին, որպեսզի վերջինս աջակցի Կիլիկիան Ֆրանսիայի մանդատի տակ դնելուն, եթե ԱՄՆ-ը չի վերցնելու Հայաստանի մանդատը[25]:

Փետրվարի 21-ին Լոնդոնում Պողոս Նուբարը, Ա. Ահարոնյանը և գեներալ Նիկոլայ Ղորղանյանը ներկայացան Հայաստանի սահմանների որոշման հանձնաժողովի նիստին, ուր ընդգրկված էին Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի 2-ական ներկայացուցիչներ: Պողոս Նուբարը ներկայացրեց հայկական պահանջները, իսկ Ն. Ղորղանյանը քարտեզի վրա գծեց սահմանները:

Ըստ նրանց՝ Հայաստանի սահմանը անցնելու էր Տրապիզոնից արևմուտք, ընդգրկելու էր Լազիստանը, Դերսիմն ու Խարբերդի շրջանը, Էրզրումն ամբողջությամբ, Վանից դուրս էր թողնվում Հաքիարին, Բիթլիսից՝ Սղերդը, Կիլիկիան ինքնավարություն էր ստանալու Ֆրանսիայի մանդատի ներքո, իսկ Հայաստանը երկաթուղային ելք էր ունենալու դեպի Միջերկրական ծով:

1920 թ. փետրվարի 22-ին Պողոս Նուբարին, Ա. Ահարոնյանին և Զավեն արք. Եղիայանին ընդունեց Լոնդոնի ֆրանսիական դեսպան Ժյուլ Կամբոնը: Վերջինս հավաստիացրեց, որ Ֆրանսիան չի հեռանա Կիլիկիայից, չնայած այն կմնա թուրքական գերիշխանության ներքո, և հայերը կլինեն Ֆրանսիայի պաշտպանության տակ: Ֆրանսիացի դիվանագետը նաև հավաստիացրեց, որ Հայաստանը անպայման ծովային ելք կունենա[26]:

Ինչպես տեսնում ենք, Ֆրանսիան արդեն որոշել էր Կիլիկիան թողնել Թուրքիայի գերիշխանության տակ, ինչը լուրջ անհանգստություն առաջացրեց հայ գործիչների մոտ :

Նույն օրը Պողոս Նուբարն ու Ա. Ահարոնյանը հանդիպեցին լորդ Ռոբերտ Սեսիլի հետ, որը Համայնքների պալատի ամենաազդեցիկ անդամներից էր: Լորդը խոստացավ հայ պատվիրակների տեսակետները պաշտպանել, և հաջորդ օրը՝ 1920 թ. փետրվարի 23-ին, նրա նախաձեռնությամբ Մեծ Բրիտանիայի պառլա-

23 Տե՛ս նույն տեղում, էջ 52-53:
24 Տե՛ս նույն տեղում, էջ 54:
25 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 1007, թ. 1:
26 Տե՛ս **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 68-69:

մենտի Արտաքին գործերի հանձնաժողովը բանաձև ընդունեց, ըստ որի Հայաստանը պետք է ելք ունենար Սև ծով, իսկ Կիլիկիայում Ֆրանսիայի մանդատի ներքո անկախ, ոչ թուրքական պետություն էր կազմվելու[27]:

Պողոս Նուբարը 1920 թ. մայիսի 6-ին հանդիպեց Ֆրանսիայի վարչապետ Ալեքսանդր Միլերանի, իսկ մայիսի 10-ին՝ նախագահ Պոլ Դեշանելի հետ: Այդ հանդիպումներից պարզ դարձավ, որ Ֆրանսիան Կիլիկիան հանձնելու է թուրքերին[28]: Փաստորեն ֆրանսիացի գործիչները ամեն քայլի դիմեցին, որպեսզի Կիլիկիան չմիացվի Միացյալ Հայաստանին, սակայն հետագայում որոշեցին այն չպահել և հանձնել թուրքերին՝ մոռանալով պատերազմի տարիներին հայերին տված խոստումները: Դա պայմանավորված էր ֆրանսիացիների այն հույսով, որ թուրքերին տարածքային զիջումներ կատարելով՝ կապահովեին տնտեսական ու քաղաքական ավելի լայն հնարավորություններ:

1920 թ. օգոստոսի 10-ին Փարիզի Սևր արվարձանում հաշտության պայմանագիր կնքվեց Անտանտի պետությունների և Օսմանյան կայսրության միջև, որին հայ ժողովուրդը սպասում էր պատերազմում Թուրքիայի պարտությունից ու զինադադարի կնքումից ի վեր՝ մեկուկես տարի: Այդ պայմանագրի հետ էր կապված հայության հիմնական երազանքների իրականացումը: Պայմանագիրը ստորագրեց նաև ՀՀ պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանը: Ըստ դրա՝ Հայաստանի և Թուրքիայի սահմանագիծը որոշելու էր ԱՄՆ նախագահ Վ. Վիլսոնը, և այն անցնելու էր Տրապիզոնի, Էրզրումի, Բիթլիսի, Վանի վիլայեթներով[29]:

Կիլիկիայի մեծագույն մասը Սևրի պայմանագրով հանձնվում էր թուրքերին, իսկ հարավարևելյան փոքր հատվածը, որն ընկած էր Ջեյհան գետից արևելք, միացվում էր Սիրիային: Սևրի պայմանագրի 2-րդ մասի 27-րդ հոդվածով, փաստորեն, Կիլիկիան բաժանվում էր Թուրքիայի և Սիրիայի միջև: Ըստ դրա՝ հետևյալ կերպ էր անցնելու Թուրքիայի հարավարևելյան սահմանը Սիրիայի հետ.

«Կետից, որն ընտրվելու է արևելյան ափին՝ Հասան Դեղեի ելքի մոտ, մոտավորապես 3 կմ հյուսիս-արևմուտք Կարաթաշ Բուրունից և հյուսիս-արևելքում մինչև այն կետը, որն ընտրվելու է Ջեյհան Իրմակ գետի վրա, մոտավորապես 1 կմ հյուսիս Բաբելից, գիծը ճշտվելու է տեղում և անցնելու է Կարաթաշից հյուսիս, այդտեղից մինչև Կեզիկ Կալե՝ Ջեյհուն Իրմակի հոսանքով վերև,

այդտեղից հյուսիս-արևելք մինչև այն կետը, որն ընտրվելու է Ջեյհուն Իրմակի վրա՝ մոտավորապես 15 կմ արևելք-հարավ-արևելք Կարսբազարից, գիծը ճշտվելու է տեղում և անցնելու է Կարա Թեփեից հյուսիս,

այդտեղից մինչև Ջեյհուն Իրմակի ոլորանը՝ Դուլդուլ Դաշից արևմուտք, Ջեյհուն Իրմակի հոսանքով վերև,

այդտեղից հիմնականում հարավարևելյան ուղղությամբ մինչև կետը, որն ընտրվելու է Էմիր Մուսի Դաղում՝ մոտավորապես 15կմ հարավ-հարավ-արևմուտք Գյավուր Գեուլից. գիծը պետք է որոշվի տեղում՝ անցնելով երկաթուղուց մոտ 18 կմ հեռավորությամբ՝ թողնելով Դուլդուլ Դաշը Սիրիային,

---

27 Տե՛ս նույն տեղում, էջ 55-57:

28 Տե՛ս **Զաւէն արք.,** Պատրիարքական յուշերս. վաւերագիրներ եւ վկայութիւններ, Գահիրէ, 1947, էջ 340-342:

29 Տե՛ս Севрский мирный договор и акты, подписанные в Лозанне, Полный перевод с французского текста под редакцией проф. **Ю. В. Ключникова** и проф. **А. Б. Сабанина** со вступительной статьей проф. Ю. В. Ключникова, Издание Литиздат НКИД, Москва, 1927, с. 31-32.

այդտեղից դեպի արևելք մինչև այն կետը, որն ընտրվելու է Ուրֆայից 5 կմ հյուսիս, գրեթե ուղիղ գիծ, որի հիմնական ուղղությունն է արևմուտքից արևելք, ճշտվելու է տեղում, անցնում է ճանապարհից հյուսիս, որը միացնում է Բաղչե, Այնթափ, Բիրիջիկ և Ուրֆա քաղաքները և թողնում է վերջին երեք քաղաքները Սիրիային,

այդտեղից դեպի արևելք և մինչև Տիգրիսի հարավարևմտյան ոլորանի եզրը՝ մոտավորապես 6կմ հյուսիս Ազեկից (27կմ արևմուտք Ջեզիրե-Իբն-Օմարից), գրեթե ուղիղ գիծ արևմուտքից արևելք, որը տեղում է ճշտվելու և Սիրիային է թողնելու Մարդին քաղաքը,

այդտեղից մինչև Տիգրիսի վրա որոշվելիք կետը՝ Խաբուր Սուի և Տիգրիսի միախառնման և Տիգրիսի ոլորանի միջև, որը գտնվում է մոտավորապես 10կմ հյուսիս այդ կետից,

Տիգրիսի հոսանքով դեպի ներքև, թողնելով Սիրիային այն կղզին, որի վրա է գտնվում Ջեզիրե-Իբն-Օմար քաղաքը»[30]:

Ինչպես տեսնում ենք, Ջեյհան գետից արևելք ընկած տարածքները, Ալեքսանդրետի շրջանը, Այնթափը, Բիրեջիկը և Ուրֆան Սևրի պայմանագրով մնալու էին ֆրանսիական ազդեցության գոտում և միացվելու էին Սիրիային: Կիլիկիայի՝ Միջերկրականին հարող հարավարևելյան լեռնային շրջաններն ընդգրկող մի փոքր հատվածը չէր հանձնվելու Թուրքիային, ինչը տեղի հայերին հնարավորություն էր տալիս չմտահոգվել ֆիզիկական գոյության մասին: Սիրիային էր անցնում նաև Հայկական Միջագետքը՝ պատմական Պիր (Բիրեջիկ), Եդեսիա (Ուրֆա) և Մծբին (Նիսսեբին) քաղաքներով: Սակայն Կիլիկիայի մեծագույն մասը հանձնվում էր թուրքերին, և այնտեղի մոտ 120.000 հայ բնակչությունը կրկին կանգնել էր գաղթելու պարտադրանքի առաջ: Հօդս ցնդեց Կիլիկիայում Ֆրանսիայի հովանու ներքո հայկական ինքնավար պետություն ստեղծելու երազանքը: Ջեյհանի, Այասի, Ալեքսանդրետի շրջանները, Այնթափը, Բիրեջիկը, Ուրֆան, որոնք Սևրի պայմանագրով չէին տրվելու Թուրքիային, նաև չէին ստանալու ինքնավարություն և միացվելու էին Սիրիային:

1920 թ. օգոստոսի 14-ին Պողոս Նուբարը բողոքի նոտա հղեց Խաղաղության վեհաժողովի նախագահ, Ֆրանսիայի վարչապետ Ա. Միլերանին՝ Կիլիկիան և Խարբերդը թուրքերին թողնելու առթիվ: Նա պահանջեց այդ տարածքները հանձնել Ֆրանսիայի հովանավորությանը և նշեց, որ Հայ ազգային պատվիրակությունը չի դադարելու պահանջել այդ տարածքները[31]:

Սակայն Պողոս Նուբարի բողոքի նոտան, բնականաբար, անուշադրության մատնվեց, քանի որ գրեթե երկու տարվա քննարկումներից հետո, եթե տերությունները որոշել էին Կիլիկիան թողնել թուրքերին, ապա պայմանագրի ստորագրումից մի քանի օր հետո չէին փոխի իրենց դիրքորոշումը:

Կիլիկիայում այս ընթացքում տեղի էին ունենում ողբերգական իրադարձություններ. Ֆրանսիան պատերազմի տարիներին, երբ փոքր ժողովուրդների օժանդակության կարիքն ուներ, հայերին ինքնավարություն էր խոստանում, սակայն պատերազմի հաղթական ավարտից հետո փոխել էր իր քաղաքականությունը:

Կ. Պոլսի ֆրանսիական «Բոսֆոր» պարբերականի խմբագիր Միշել Փայարե-

30 Պայմանագրի այս հատվածը թարգմանել ենք ռուսերեն և անգլերեն փաստաթղթերի համադրությամբ: Տե՛ս Севрский мирный договор, ст. 15-16 և http://wwi.lib.byu.edu/index.php/Section_I,_Articles_1_-_260

31 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 57, ց. 5, գ. 224, թ. 12:

սը իր «Le Kemalisme Devante les Allies» գրքում նշում է, որ պատերազմից հետո Ֆրանսիայի բարձրաստիճան քաղաքացիական և զինվորական պաշտոնյաները իրեն խորհուրդ էին տալիս պաշտպանել թուրքերին, քանի որ, ըստ նրանց, «հայերն ու յոյները պիտի դառնան ֆրանսացիներու ամէնէն ուժեղ մրցակիցները Մերձաւոր Արեւելքի առեւտրական հրապարակին վրայ»[32]: Ֆրանսիան նաև դժգոհ էր Կիլիկիան Հայաստանին միացնելու հայերի ձգտումներից և այդ տնտեսական ու քաղաքական դրդապատճառներից ելնելով՝ սկսեց վարել հակահայկական քաղաքականություն: Սկզբնական շրջանում, երբ Կիլիկիան գրավվեց ու պահվում էր Հայկական լեգեոնի ուժերով, Ֆրանսիան բարյացակամ էր հայերի հանդեպ, սակայն 1919 թ. աշնանից, երբ ֆրանսիական զորքերը մտան այդ երկրամաս, սկսվեց Հայկական լեգեոնը ցրելու և թուրքերին սիրաշահելու քաղաքականությունը:

1920 թ. աշնանը տեղի ունեցած հայ-թուրքական պատերազմում հայկական բանակը պարտվեց, ապա Հայաստանը խորհրդայնացվեց: Դրանից հետո պարզ էր, որ Սևրի պայմանագրի՝ Հայաստանին վերաբերող հոդվածները տվյալ պայմաններում չէին կարող իրականություն դառնալ: Ինչպես հետագայում Սևրի պայմանագիրը բնորոշել է Ուինստոն Չերչիլը՝ «13 ամիս նախապատրաստվող այդ փաստաթուղթը հնացավ ավելի շուտ, քան պատրաստ էր»[33]: Ստորագրելու պահին արդեն պարզ էր, որ Թուրքիայում իրական իշխանություն դարձած քեմալականները դեմ էին դրան և պատրաստ էին ցանկացած զոհողության գնով չեզոքացնելու այն: Դա էր պատճառը, որ արդեն 1920 թ. աշնանից բրիտանացի դիվանագետները տարբերակներ էին մշակում Սևրի պայմանագիրը վերանայելու համար:

1921 թ. փետրվարի 17-ին Մեծ Բրիտանիայի ԱԳՆ փորձագետներ Օսբորնի և Արթուր Նիկոլսոնի կողմից կազմված մի փաստաթղթում նախատեսվում էր Թուրքիայի հետ նոր պայմանագիր ստորագրելիս հրաժարվել վիլսոնյան սահմանագծումից, իսկ արևմտահայերին տեղավորել Կիլիկիայում, ուր պետք է ինքնավարություն տրվեր հայերին՝ Թուրքիայի գերիշխանության և Ազգերի լիգայի հովանու ներքո: Այն նախատեսում էր Սևրի պայմանագրի 3-րդ մասի 6-րդ բաժինը վերաձևակերպել հետևյալ կերպ.

«ա) Թուրքիան ճանաչում է Երևանի հայկական հանրապետության անկախությունը նախապատերազմյան ռուսական սահմաններում և հրաժարվում է Կարսի, Ալեքսանդրապոլի և Արդահանի շրջանների նկատմամբ բոլոր պահանջներից ի ճանաչումն այն բանի, որ Հայաստանը հրաժարվում է պահանջներից թուրքական վիլայեթների նկատմամբ, բ) Թուրքիան ճանաչում է թուրքական տերիտորիայում հայերի ինքնավարության իրավունքը և պարտավորվում է Ազգերի լիգային զիջելու սուվերեն իրավունքները և իրավունք Կիլիկիայում բավարար տերիտորիայի վրա ամփոփելու երկրում գտնվող թուրքահայերին, աջակցելու հայ փախստականների վերադարձին դրսից: Այս տերիտորիան, որը կառավարվելու է հայերի կողմից Լիգայի գերակայության ներքո, տարածվելու է մոտավորապես Մերսին-Տարսուս-Ադանա-Օսմանիե սահմանագծից մինչև Հաճըն-Զեյթուն-Մարաշ սահմանագիծը, այն շրջանակներում, որը որոշվելու է Ազգերի լիգայի նշանակած հանձնաժողովի կողմից և ներառելու է Թուրքիայի ու Հայաստանի ներ-

32 **Ամատունի Յ.,** Մեր յարաբերութիւնները դաշնակիցներուն հետ, «Հայրենիք» ամսագիր, Պոսթըն, 1941, N 7 (223), էջ 101:

33 **Черчиль В.,** Мировой кризис, М.-Л., 1932, с. 258.

կայացուցիչներին, գ) Թուրքիան պարտավորվում է դյուրացնել Թուրքիայի մյուս մասերից բոլոր հայերի տեղափոխումն այս տերիտորիան, ովքեր կցանկանան գնալ այնտեղ, ինչպես նաև օգնել բոլոր թուրքերին, ովքեր կկամենան հեռանալ այս տերիտորիայից և հաստատվել Թուրքիայի այլ վայրերում»[34]:

Վերոհիշյալ փաստաթղթի հեղինակներից Օսբորնը 1921 թ. փետրվարի 22-ին Ա. Ահարոնյանին խորհուրդ տվեց ձեռք քաշել Արևմտյան Հայաստանից և Կիլիկիայում պետություն հաստատելու փորձ անել[35]:

1921 թ. փետրվարի 26-ին Լոնդոնի կոնֆերանսում Պ. Նուբարը պաշտոնապես խնդրեց Ֆրանսիային, որի ազդեցության գոտին էր Կիլիկիան, որպեսզի այդ երկրամասի՝ Թուրքիային հանձնվելիք տարածքների վրա հայերին տրվի վարչական ինքնավարություն, իսկ ներքին կարգը պահելու համար ստեղծվի խառը ժանդարմերիա՝ հայերից ու մահմեդականներից: Նա խնդրեց, որպեսզի Ֆրանսիան չլքի այնտեղ վերադարձած 150.000 հայերին[36]: Սակայն ֆրանսիական պատվիրակության ղեկավար Ֆ. Բերտլոն պատասխանեց, որ իր կառավարությունը անհնար է համարում Կիլիկիայում հատուկ վարչաձև մտցնելը, իսկ հայկական փոքրամասնության անվտանգությունը ապահովելու համար հավանական համարեց ֆրանսիացի սպաների գլխավորությամբ խառը ժանդարմերիայի ստեղծումը: Պողոս Նուբարը պատասխանեց, որ հայերը փոքրամասնություն չեն եղել Կիլիկիայում ո՛չ պատերազմից առաջ, ո՛չ էլ տվյալ պահին, և ներկայացրեց ֆրանսիական աղբյուրների վրա հիմնված և Ֆրանսիայի ներկայացուցիչների պալատի կողմից ընդունված թվերը, ըստ որի նախապատերազմյան շրջանում Ադանայի նահանգում ապրում էր 215.000 քրիստոնյա և 185.000 մահմեդական: Ֆրանսիացի պատվիրակները փորձեցին ժխտել դա և ներկայացրին թուրքական պաշտոնական կեղծ տվյալները, ըստ որի Ադանայի նահանգում 1914 թ. իբր ապրում էին 314.000 մահմեդական և 55.000 հայ[37]:

Ինչպես տեսնում ենք, ֆրանսիական իշխանությունները արդեն որոշել էին Կիլիկիան թողնել թուրքերին և իրենց այդ քայլը արդարացնելու համար պատրաստ էին դիմելու ցանկացած կեղծիքի: Հետագա քննարկումներում նրանք մի քանի անգամ շահարկեցին այդ կեղծ վիճակագրական տվյալները: 1922 թ. մարտի 23-ին Բրիտանիայի ԱԳ նախարար լորդ Ջորջ Քերզոնը ստիպված եղավ ֆրանսիացիներին հակադարձել՝ բերելով ամերիկյան անկողմնակալ գործիչների վկայությունները: Նա փաստեց, որ Ադանայի վիլայեթում նախապատերազմյան շրջանում հայերի թիվը շուրջ 200.000 էր[38]:

Մինչ այդ՝ 1921 թ. մարտի 9-ին, Լոնդոնում Արիստիդ Բրիանը և քեմալական Թուրքիայի արտգործնախարար Բեքիր Սամի բեյը համաձայնագիր էին ստորագրել, որով Կիլիկիան թողնվելու էր թուրքերին, որի դիմաց Ֆրանսիան ստանում էր տնտեսական որոշակի առանձնաշնորհումներ: Ֆրանսիական զորքերը դուրս էին բերվելու Կիլիկիայի նույնիսկ այն շրջաններից, որոնք Սևրի պայմանագրով մնալու էին Ֆրանսիային: Սակայն Թուրքիայի Ազգային մեծ ժողովը չհաստատեց այդ պայմանագիրը[39]:

---

34 Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 696:
35 Տե՛ս **Ահարոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 144-145:
36 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 699-700:
37 Տե՛ս նույն տեղում, էջ 703-704:
38 Տե՛ս նույն տեղում, էջ 720:
39 Տե՛ս Севрский мирный договор ..., с. XXII.

1921 թ. սեպտեմբերի 21-ին Ազգերի լիգայի Գլխավոր ասամբլեան միաձայն բանաձև ընդունեց, որով պահանջում էր Սևրի համաձայնագիրը վերանայելու դեպքում նոր պայմանագրում հատուկ կետ մտցնել, որով հայերի համար ստեղծվելու էր ազգային օջախ՝ ամբողջովին անկախ թուրքական կառավարումից[40]: Սակայն քիչ անց՝ Անկարայի պայմանագրի ստորագրումից և Կիլիկիան թուրքերին հանձնելուց հետո, Ազգերի լիգայի բանաձևը դարձավ անիրականանալի: «Ֆրանսիայի շահերը Կիլիկիայում ածանցյալ էին, երկրորդական ողջ Թուրքիայում նրա ունեցած տնտեսական, ֆինանսական և քաղաքական շահերի համեմատ, իսկ ֆրանսիացիները ցանկացած պահի պատրաստ էին զոհաբերելու Կիլիկիան էլ, նրա հայությունն էլ, եթե քեմալական կառավարությունը թեկուզ նվազագույն չափով ճանաչեր այդ շահերը»[41],- գրում է պատմաբան Արման Մարտիրոսյանը:

1921 թ. հոկտեմբերի 20-ին Անկարայում կնքվեց ֆրանս-թուրքական նոր պայմանագիր: Այն ստորագրեցին Ֆրանկլին Բույոնը և Յուսուֆ Քեմալ բեյը, և հաստատվեց Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կողմից: Դրանով ապահովվում էին Ֆրանսիայի՝ թուրքական երկաթուղիներից օգտվելու և այլ տնտեսական իրավունքները: Ըստ դրա՝ Կիլիկիան անցնում էր թուրքերին: Երկամսյա ժամկետում ֆրանսիական զորքերը պետք է քաշվեին որոշված սահմանից հարավ, իսկ թուրքականը՝ հյուսիս: Թուրքիայի և Սիրիայի սահմանագիծն անցնում էր Ալեքսանդրետի ծոցի մոտ՝ Պայասից հարավ, Մեյդան-Էկբես վայրով, հարավ-արևելքում՝ մինչև Բաղդադի երկաթուղագծի Չոբան բեյ կայարան, ապա գլխավոր ճանապարհի ուղղությամբ, որը մնում էր թուրքական կողմում, սահմանը շարունակվում էր մինչև Նյուսսեյբին-Ջեզիրե իբն Օմար՝ Տիգրիսի մոտ: Նախատեսվում էր, որ ազգային փոքրամասնությունների իրավունքները հաստատվելու էին Ազգային Մեծ ժողովում: Կիլիկիայի հարավարևելյան մասը հանդիսացող Ալեքսանդրետի շրջանը միացվում էր Սիրիային, սակայն այնտեղ հաստատվելու էր հատուկ վարչական կառավարում: Այդ տարածքի թուրք բնակչության համար սեփական մշակույթը զարգացնելու բարենպաստ պայմաններ էին ստեղծվելու, իսկ թուրքերենը լինելու էր պաշտոնական լեզու[42]: 1939 թ. թուրքերը այս շրջանը ևս բռնազավթեցին Սիրիայից:

Անկարայի պայմանագիրը լուրջ դժգոհություն առաջացրեց բրիտանացիների մոտ[43], քանի որ Ֆրանսիան դրանով խախտում էր 1915 թ. նոյեմբերի 30-ի ֆրանս-բրիտանական համաձայնագիրը, ըստ որի նրանք անջատ հաշտություն չէին կնքելու Քառյակ դաշինքի երկրների հետ: Անկարայի պայմանագիրը ծանր հարված էր հասցնում նաև Սևրի պայմանագրին, քանի որ խոշոր տերություններից մեկը թուրքերի հետ նոր համաձայնագիր էր կնքում՝ ոտնահարելով Սևրի պայմանները:

1922 թ. մարտի 23-ին Փարիզում Բրիտանիայի, Ֆրանսիայի և Իտալիայի արտգործնախարարների հանդիպման ժամանակ Ջ. Քերզոնը հիշեցրեց նախկինում հայերին տրված խոստումները, նրանց հանդեպ ստանձնած պարտավորությունները և առաջարկեց հայ գաղթականության համար ստեղծել հատուկ

40 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 734:
41 **Մարտիրոսյան Ա.**, Ֆրանս-թուրքական հարաբերությունները 1920-1939 թթ., թեկնածուական ատենախոսություն, Եր., 2011, էջ 46:
42 Տե՛ս Севрский мирный договор ..., с. XXII.
43 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության ... փաստաթղթերում, էջ 706:

հանգրվան՝ նրանց համախմբելով Ադանայի վիլայեթի և Մարաշի սանջակի տարածքներում, որտեղ թուրքերը պետք է նահանգապետ նշանակեին՝ Ազգերի լիգայի հետ խորհրդակցելուց հետո: Ֆրանսիայի ներկայացուցիչ Ռայմոնդ Պուանկարեն նշեց, որ Թուրքիան երբեք Կիլիկիան չի զիջի հայերին, քանի որ այդ երկրամասը չափազանց հարուստ է: Նա կարծում էր, որ միակ լուծումը հայերին Ալեքսանդրետի և Հալեպի շրջաններում ֆրանսիական մանդատի տակ թողնելն է կամ Արևմտյան Հայաստանի տարածքում ազգային օջախի ստեղծումը: Որքան էլ Ջ. Քերզոնը փորձեց Ռ. Պուանկարեին համոզել, որ համատեղ քայլեր կատարեն, որպեսզի թուրքերին համոզեն հայերին թույլատրելու վերահաստատվել Կիլիկիայում, Ֆրանսիայի ներկայացուցիչը դեմ արտահայտվեց: Քանի որ դաշնակիցները ռազմական ճանապարհով թուրքերին որևէ զիջում պարտադրել չէին ցանկանում, որոշեցին դա անել խաղաղ ճանապարհով՝ Ազգերի լիգայի միջոցով: 1922 թ. մարտի 24-ին ևս Ռ. Պուանկարեն ամեն ջանք գործադրեց, որպեսզի Կիլիկիան չհամարվի հայերի ազգային օջախի տարածք: Ջ. Քերզոնը առաջարկում էր փաստաթղթում նշել Արևմտյան Հայաստանը կամ Կիլիկիան, սակայն ֆրանսիական ներկայացուցչի համառ պնդումներից հետո որոշվեց նշել Փոքր Ասիայի որևէ վայր, որը Ազգերի լիգան և Թուրքիան հարմար կգտնեն: Որոշվեց Թուրքիայի հետ հաշտության պայմանագրի կնքման և Ազգերի լիգային անդամակցության համար պահանջ դնել, որպեսզի թուրքերը ստեղծեն հայկական ազգային օջախ[44]:

1922 թ. մարտի 26-ին մերձավորարևելյան կոնֆերանսը վերոնշյալ քննարկումների արդյունքում Հայկական հարցում ընդունեց հետևյալ բանաձևը. «Երեք տերությունները, գիտակցելով մի շարք առիթներով հրապարակայնորեն ընդունված իրենց պարտավորությունները՝ հայ ժողովրդին ապահովելու ազգային ինքնավար գոյություն, և ցանկանալով այդ պարտավորությունների կատարումը ներդաշնակության մեջ դնել ներկա իրավիճակի հետ, որոշեցին Ազգերի լիգային կոչ անել ապահովելու հատուկ պատասխանատվություն՝ իրականացնելու համար փոքրամասնությունների պաշտպանության համար առաջարկված երաշխիքներն ինչպես Եվրոպայում, այնպես էլ Ասիայում, գտնելով, որ Թուրքիային, հաշտություն կնքելուց հետո, կթույլատրվի դառնալու այդ լիգայի անդամ: Տերությունները գտնում են, որ առավել բարենպաստ առիթ, քան այժմ, չի ներկայանա բավարարելու համար հայերի պահանջները, որոնք ինչպես իրենց թվով, այնպես էլ իրենց նշանակությամբ այդ փոքրամասնությունների առաջին շարքերում են: Հայերի պահանջները պարփակվում են ընդհանուր ձգտման մեջ՝ պահպանել իրենց համար մի ազգային օջախ Փոքր Ասիայի այս կամ այն շրջանում, որտեղ նրանք ցարդ հաստատված են նշանակալից թվով: Ընտրությունն այն շրջանի, ուր այդ օջախը կարելի կլինի առավել լավ ապահովել, կախված է քաղաքական, տնտեսական և սոցիալական այն պայմաններից, որոնք ներկա պահին հնարավոր չէ ճշգրիտ որոշել:

Այնուհանդերձ, տերությունները մասնավորապես Ազգերի լիգային կառաջարկեն, հաշտություն կնքելուց անմիջապես հետո, բանակցությունների մեջ մտնել օսմանյան կառավարության հետ հայերի համար նման մի ազգային օջախ ստեղծելու հարցի շուրջ և կջանան սահմանել այն պայմանները, որոնցով կարելի է իրականացնել նրա ապագա գոյության համար անհրաժեշտ երաշխիքները: Այդ նպատակով երեք տերությունները խոստանում են ցույց տալ հնարավոր

44 Տե՛ս նույն տեղում, էջ 718-731:

աջակցությունը, համոզված լինելով, որ Հայկական հարցի հոժարակամ լուծումը հավասարապես ցանկալի է հայերի, Թուրքիայի և Արևելքի խաղաղության շահերի տեսակետից»[45]:

Այդ որոշումները պետք է բարձրացվեին Լոզանի կոնֆերանսում: Այնտեղ Հայկական հարցն առաջին անգամ քննարկվեց 1922 թ. դեկտեմբերի 12-ին՝ ռազմատերիտորիալ հանձնաժողովի 13-րդ նիստում: Այստեղ ևս Ջ. Քերզոնը առաջարկեց հայերի համար որևէ տարածք հատկացնել Թուրքիայի հյուսիս-արևելյան (Արևմտյան Հայաստան) կամ հարավարևելյան (Կիլիկիա) շրջաններում: Սակայն թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան կտրականապես դեմ արտահայտվեց որևէ ազգային փոքրամասնության արտոնություններ տալուց և առաջարկեց քրիստոնյաների մնացորդներին փոխանակել այլ երկրների մահմեդական բնակչության հետ: Իսմեթը նույնը կրկնեց նաև դեկտեմբերի 13-ի նիստում և կտրականապես հայտարարեց, որ Թուրքիան ո՛չ իր արևելյան նահանգներում, ո՛չ Կիլիկիայում չունի որևէ տարածք, որի բնակչության մեծամասնությունը թուրքեր չլինեն և անհնար է դրանք անջատել մայր հայրենիքից: Հետագա բոլոր քննարկումներն անցան ապարդյուն, և թուրքերը վճռականորեն հրաժարվեցին ոչ միայն հայերի համար ազգային օջախ տրամադրելուց, այլև հայ գաղթականների վերադարձը թույլատրելուց[46]:

1923 թ. հուլիսի 24-ի Լոզանի պայմանագիրը (մաս 1, բաժին 2, հոդված 3) հաստատեց Անկարայի պայմանագրով հստակեցված թուրք-սիրիական սահմանը[47]: Դրանով ձևակերպվեց 1922 թ. հունվարից իրողություն դարձած փաստական վիճակը՝ Կիլիկիան վերջնականապես հանձնվեց Թուրքիային:

Ամփոփելով՝ նշենք, որ Առաջին համաշխարհային պատերազմից հետ Կիլիկիան մտավ ֆրանսիական ազդեցության գոտու մեջ և մոտ 150.000 կիլիկիահայեր, «Հայկական լեգեոնի» պաշտպանության տակ, վերադարձան ու սկսեցին վերականգնել Մեծ եղեռնի արդյունքում ավերված օջախները: Սակայն Սևրի պայմանագրով Կիլիկիայի մեծագույն մասը կրկին միացվելու էր Թուրքիային, իսկ հարավարևելյան փոքր հատվածը և Հայկական Միջագետքը՝ Սիրիային: Դրանով մերժվեցին Կիլիկիան Հայաստանին միացնելու կամ այնտեղ Ֆրանսիայի հովանու ներքո ինքնավարություն ստանալու հայկական պահանջները: Կիլիկիայի մեծ մասը կանգնեց հայաթափման վտանգի առաջ, իսկ Ջեյհանից արևելք ընկած տարածքներում հայերը կարող էին ստանալ միայն ֆիզիկական անվտանգություն: Ձախողվեց նաև Կիլիկիայում հայկական ազգային օջախ ստեղծելու և հայ գաղթականությանը այնտեղ համախմբելու բրիտանական նախագիծը: Ի վերջո, ֆրանսիացիները Անկարայի և Լոզանի պայմանագրերով թուրքերին զիջեցին նաև մյուս հայկական տարածքները՝ մոտ 150.000 հայ բնակչությանը կանգնեցնելով գաղթելու պարտադրանքի առաջ:

45 Նույն տեղում, էջ 732-733:
46 Տե՛ս նույն տեղում, էջ 735-753:
47 Տե՛ս Севрский мирный договор ..., с. 145.

Summary

THE QUESTION OF CILICIA IN THE TREATIES OF SEVRES AND LAUSANNE

Samvel A. Poghosyan

After WWI about 150.000 Armenians returned to Cilicia. They ware defended by the Armenian Legion, which had been formed in 1916 to liberate the Cilicia. The Armenians aimed to unite Cilicia and United Armenia or to get autonomy under the patronage of France. But by Sevres Treaty the great part of Cilicia was given to Turkey and a small part of Cilicia to Syria. It was a tragedy for Armenians who had survived from Genocide and returned to their homeland.

After the Treaty of Sevres failure it was planned to create Armenian National Home in Cilicia and Armenian Mesopotamia and to concenter the Armenian refugees there. But that idea didn't find any solution. France handed all Armenian lands to Turkey by Ankara Treaty. The long lasting and hot discussions of great Powers about the Armenian Question were failed. By the Conference of Lausanne the discussions of creating Armenian National Home in Cilicia were finally closed.